ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. նոյեմբերի 8-ից 9-ը Էկվադորի Հանրապետություն (Կիտո)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Էկվադորի Հանրապետություն (Կիտո)

2018թ. նոյեմբերի 8-ից 9-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

«Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրության կողմերի երեսուներորդ բարձրաստիճան հատվածի հանդիպում

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Բացման խոսքով հանդես եկավ Էկվադորի Հանրապետության նախագահը՝ ընդգծելով երկրի ջանքերը կայուն զարգացման և շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ: Նստաշրջանի բացման փուլում Հայաստանի ներկայացուցիչն ընտրվեց Մոնրեալի արձանագրության կողմերի երեսուներորդ հանդիպման բյուրոյի նախագահ:

Օզոնի քարտուղարության երեք գնահատման խմբերը ներկայացրեցին իրենց կողմից իրականացված քառամյա գնահատման արդյունքները՝ անդրադառնալով օզոնային շերտի քայքայման ներգործությանը շրջակա միջավայրի վրա, օզոնային շերտի ակնկալվող վերականգնմանը, ուլտրամանուշակագույն ճառագայթմանը՝ հատուկ ընդգծելով Մոնրեալի արձանագրության նշանակությունը շրջակա միջավայրի կայունության,

մարդու առողջության պահպանման և բարեկեցության հարցում, ինչպես նաև դրա կապը կայուն զարգացման նպատակների հետ: Գնահատման խմբերից մեկն անդրադարձավմթնոլորտում օզոնաքայքայիչ նյութի՝ ՔՖԱ-11-ի մեծ քանակություններով արտանետումների հայտնաբերմանը Արևելյան Ասիայի տարածաշրջանի հատվածում, որոնք վկայում են տվյալ տարածաշրջանում այդ նյութերի ապօրինի շրջանառության մասին:

Մոնրեալի արձանագրության Բազմակողմանի հիմնադրամի գործադիր կոմիտեի ղեկավարը ներկայացրեց նույն կոմիտեի, բազմակողմանի հիմնադրամի քարտուղարության և իրականացնող գործակալությունների հաշվետվությունները կատարված աշխատանքների վերաբերյալ: Նշվեց, որ գործադիր կոմիտեն շարունակելու է իր աշխատանքները Կիգալիի ուղղմանը վերաբերող քաղաքականության մշակման ուղղությամբ:

Հայաստանի պատվիրակությունը Բոսնիայի և Հերցեգովինայի պատվիրակության հետ համատեղ Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի անունից մշակեց որոշման նախագիծ, որի համաձայն՝ տվյալ տարածաշրջանի անդամ երկրներին իրավունք է տրվում գործադիր կոմիտեի աշխատանքներին մասնակցել տարեկան կտրվածքով: Հարկ է նշել, որ ի տարբերություն մյուս տարածաշրջանային խմբերի երկրներին, Արևելյան Եվրոպայի երկրները երկար ժամանակ զրկված են եղել այդ հնարավորությունից:

Այս հարցի շրջանակներում նախաձեռնվեցին երկկողմանի հանդիպումներ մյուս պատվիրակությունների հետ, որոնց արդյունքնում որոշվեց հարցի քննարկումը տեխափոխել մյուս տարվա հանդիպումների օրակարգ: Բացի դրանից, նստաշրջանի ընթացքում ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնք վերաբերում էին Մոնրեալի արձանագրության 7-րդ հոդվածով սահմանված օզոնաքայքայիչ նյութերի գործածման տարեկան տվյալների ներկայացման ժամկետներին և ձևաչափին, մթնոլորտում հայտնաբերված ապօրինի ՔՖԱ 11-ի հարցին՝ ընդգծելով Չինաստանի կողմից համապատասխան գործողությունների իրականցման կարևորությունը,օզոնաքայքայիչ նյութերի կամ Ֆգազերի փոխարինման ընթացքում էներգաարդյունավետության կարևորությանը:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Հանդիպումներ են տեղի ունեցել ԱՄՆ-ի, Կանադայի և Լատինական Ամերիկայի ու Կարիբյան կղզիների տարածաշրջանային խմբերի երկրների պատվիրակությունների հետ:

8. ՁԵՌՔԲԵՐՎԱԾՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակել գործադիր կոմիտեում ներկայացուցչություն ունենալու հարցի քննարկումները այլ տարածաշրջանային խմբերի երկրների հետ:

Բնապահպանության
նախարարի առաջին տեղակալ՝

Invalid signature

X

Irina Ghaplanyan
First Deputy Minister of Nature Protection o...
Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366

Իրինա Ղափլանյան